ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍԱՐԱՄԵՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N 83 << 23>> << 12>> 2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ.
Ի պատասխան Ձեր 29.11.2016թ.-ի թիվ 101/107.3.1/5626-16 գրությանը և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 23.11.2016թ.-ի թիվ 01/16.2/5131-16 հանձնարարականի .
Ձեզ ենք ներկայացնում Սարամեջ համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը :

Առդիր 24 թերթ :

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍԱՅՆ
գ. Սարամեջ (23.12.2016թ.) Կ.տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58
Էլ հասցե saramej.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 դեկտեմբերի 2016 թվականի թիվ 33

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 53 հոդվածով, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 23.11.2016թ.-ի թիվ 01/16.2/5131-16 հանձնարարականով Սարամեջ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ե Ց.

1.Հաստատել Սարամեջ համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի :

2.Ուժը կորցրած ճանաչել 14.10.2016թ.-ի թիվ 21 համայնքի ավագանու որոշումը :

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	ԿՈՂՄ՝(7)	ԴԵՄ՝(0)	ՁԵՌՆՊԱՀ՝(0)
1.ՎԱՀՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ			
2.ԱՂՎԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ			
3.ՇԱԼԻԿՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ			
4.ՋՈՆԵՐԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ			
5.ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ			
6.ԷԼՖԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ			
7.ՍԼԱՎԻԿ ՏՈՆՈՅԱՆ			

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58
Էլ հասցե saramej.lori@mta.gov.am

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Հ Ն Գ Ա Մ Յ Ա
Ծ Ր Ա Գ Ի Ր

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 21.12.2016 թ.թիվ_33_որոշմամբ

(21.12.2016թ.)

Բովանդակություն

1.Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....3
2.Համայնքի իրավիճակի նկարագրությունը.....5
2.1.Համայնքի ընդհանուր նկարագրությունը.....5
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը.....6
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը.....7
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները.....7
2.5.Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....8
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն.....10
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....11
3.1.Համայնքի զարգացման տեսլական 11
3.2. Համայնքի զարգացման անմիջապես նպատակներ.....11
4. ՀԶԾ ֆինանսավորում.....18
5. ՀԶԾ մոնիթորինգ.....18

1. **Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք**

Հարգելի համագյուղացիներ

Ձեզ եմ ներկայացնում Սարամեջ համայնքի զարգացման ծրագիրը: Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարամեջ համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Համայնքի զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է՝ համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, համայնքի տեսլականը, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ոլորտային ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:

Համայնքի հիմնական պրոբլեմներն են՝ Համայնքի բնակչության մի մասը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝

ա/ գյուղատնտեսության ցածր մակարդակը,

բ/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների:

գ/ կենցաղային աղբահեռացում չի կատարվում:

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի և համայնքի ավագանին, քննարկվել ու հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում կատարված բոլոր առաջարկությունները: Ծրագիրը հաստատվել է համայնքի ավագանու անդամների կողմից:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Սարամեջ համայնքը գտնվում է Լոռու մարզի հյուսիս –արևելյան հատվածում : Սահմանակից է Ջրաշեն և Լեռնանցք համայնքներին: Համայնքի տարածքով հոսում է գյուղի առվակը: Կլիման բարեխառն է ամռանը՝ մեղմ է և զով ձմեռը՝ ցրտաշունչ փակվում են ճանապարհները կապը ընդհատվում է:

Երաշտները հաճախակի են ամռանը, իսկ գարնան անձրևները հորդառատ, որի հետևանքով առվակը վարարում և վնաս է պատճառում առվակի ափամերձ շրջանում բնակվող բնակչությանը քիչ չեն նաև ուժեղ քամիները և կարկտահարությունները:

Սարամեջ համայնքը հիմնադրվել է 1861 թվականին: Բնակչությունը ներգաղթվել է Արևմտյան Հայաստանի Մշո Խ նուս գավառի Բուլանուխ բնակավայրից . գյուղը շրջապատված է սարերով և գտնվում է ծովի մակերևույթից 1720-1760 մետր բարձրության վրա:

Համայնքի բնակչության գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ նրանք բավարարված չեն ոռոգման ջրով, իսկ նրանց ապրուստի հիմնական միջոցներն են անասնապահությունը , հողագործությունը և մեղվաբուծությունը:

Համայնքի բնակչության առկա թիվը՝1609,

այդ թվում՝

0-1 տարեկան – 21

1-6 տարեկան- 116

7-17 տարեկան- 276

18-22 տարեկան –196

23-45 տարեկան- 483

42-62 տարեկան- 363

63 և ավելի – 154

Բնակչության սոցիալական կազմը՝

Այդ թվում՝

թոշակառուներ –182

միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներ – 2

հայրենական պատերազմի մասնակիցներ- 0

հաշմանդամներ – 28

որից՝

0-5 տարեկան – 3

Զբաղվածներ այդ թվում գյուղ/աշխ. – 759

գործազուրկներ – 418

ընտանիքների (ծխերի) թիվը- 375

փախստականներ- 0

2.2. Համայնքիսոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 37.803.2մլն դրամ:
- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 4.625.9 մլն դրամ(13%),
- Ստորև բերված են համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունների եկամուտները՝

Ձեռնարկություններ	Քանակը	Եկամուտներ,հազ.
Կոոպերատիվ	1	1260
Խանութներ	4	40000

- Աղյուսակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2016թ.

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Ցանքատարածության չափը	Արտադրանքի քանակը
կարտոֆիլ	30հա	84տ
կաղամբ	9հա	22.5տ
միս		15տ
բուրդ		1.2տ
ձու		82հազ.հատ
մեղր		5.7տ
ցորեն	80հա	205տ
գարի	60հա	110.5 տ
Կերային մշակաբույսեր	60հա	260տ

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	256
Այդ թվում կովեր	184
Մանր եղջերավոր անասուններ	341
Այդ թվում մայրեր	330
խոզեր	30
Այդ թվում մայրեր	25

թռչուններ	1400
Այդ թվում հավեր	1350
մեղվաընտանիքներ	250

- Հայրենական պատերազմի զոհվածների հուշարձան,
- Երկրաշարժի զոհերի հուշարձան

- Համայնքում գործում է միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 191 աշակերտ:

Դպրոցն ունի 37 աշխատող:

- Համայնքում գործում է մեկ բուժկետ:

  Բուժկետում աշխատում է 1 աշխատող:

- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 161 ընտանիքներ,
- Համայնքում գործազրկության մակարդակը կազմում է բարձր է:

2.3. *Համայնքում իրականացվող ծրագրերը*

- Համայնքում ՄԱԿ-ի զարգացման ծրագրով և ՀՀ կառավարության կողմից տրամադրվող միջոցներով նոր գյուղի տարածքում իրականացվում է ոռոգման ջրագծի ցանցի կառուցման աշխատանքները : Այն կնպաստի տնամերձ հողամասերում այգեգործության և ջերմոցային տնտեսության զարգացմանը:
- ԾԻԳ-ի աջակցությամբ համայնքում ստեղծվել է կոոպերատիվ, տրամադրվել են գյուղատնտեսական մեխանիզացիաներ: Առաջիկա տարիներին նախատեսված է իրականացնել մոնիտորինգներ: ԾԻԳ-ի կողմից ստեղծված կոոպերատիվը կմեծացնի համայնքաբնակների համախմբվածությունը և կխթանի գյուղատնտեսության զարգացմանը:

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

N	Եկամուտի տեսակը	2017	2018	2019	2020	2021
	Ընդամենը եկամուտներ	37.803.200	39 մլն	40. մլն	41 մլն	42մլն
Ա	Հարկային եկամուտներ	4.624.900	4.624.900	4.624.9 00	4.624.9 00	4.624.900
1	Հողի հարկ	1.998.800	1.998.800	1.998.800	1.998.800	1.998.800

2	Գույքահարկ	1.885.800	1.885.800	1.885.800	1.885.800	1.885.800
3	Եկամտահարկ					
4	Այլ հարկային եկամուտներ					
Բ	Տուրքեր					
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր	112 հազ	112 հազ	112 հազ	112 հազ	112 հազ
Գ	Ոչ հարկային եկամուտներ					
1	Վարձավճարներ	629.3 հազ	629.3 հազ	629.3 հազ	629.3 հազ	629.3 հազ
3	Տեղական վճարներ					
4	Այլ ոչ հարկային եկամուտներ	20հազ	20հազ	20հազ	20հազ	20հազ
Դ	Դոտացիա	33.157.300	34.345.100	34.345.100	34.345.100	34.345.100
Ե	Եկամուտներ կապիտալ գործառություններից					
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ					

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Սարամեջ համայնքի առջև ծառացած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝

Համայնքի բնակչության գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Գյուղատնտեսությամբ զբաղվողների ցածր եկամուտը

1) ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոններն են՝

. մարզադահլիճ և մարզագույք չունենալը,

2) Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝ .համայնքաբնակների աղքատությունը,

3) Համայնքի բնակավայրերի կառուցապատմանը, բարեկարգմանը և կանաչապատմանը, համայնքի աղբահանությանը և սանիտարական մաքրմանը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովմանը, ինչպես նաև փողոցային լուսավորության բացակայությունը և գործունեության ապահովմանը խոչընդոտող գործոններն են՝

.աղբամաններ և աղբահավաք մեքենա չունենալը

. ֆինանսական պայմանների բացակայությունը

4) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝

ա/ հաճախակի են լինում երաշտի տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքը,

բ/ նրանք բավարարված չեն ոռոգման ջրով,

գ/ հնարավորություն չունեն որակյալ սերմեր և վառելանյութ ձեռքբերելու,

դ/ գյուղացին չի կարողանում իրացնել իր արտադրանքը,

ե/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների:

Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմեր	*Համայնքի թույլ կողմեր*
.մասնագետների և աշխատուժի առկայություն .Միջնակարգ դպրոցի առկայություն. .Հեռահաղորդակցության առկայություն .Գազաֆիկացման առկայություն .Արոտավայրերի առկայություն անասնաբուծության զարգացման համար	.Ոռոգման ցանցի բացակայություն .համայնքի գլխավոր ճանապարհի անմխիթար վիճակը .Ֆինանսական ռեսուրսների բացակայություն .Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճը .Աշխատատեղերի պակաս .Հեղեղատարների բացակայությունը
Հնարավորություններ	*Սպառնալիքներ*
.Ոռոգման ջրի պաշարի առկայություն .Խմելու ջրի պաշարի առկայություն .Պետական և միջազգային ծրագրերի մեջ ընդգրկվածություն	.Տարերային աղետների վտանգ .Գյուղ. մթերքների գների նվազում .Գյուղատնտեսական մթերքների արտահանման դժվարություն .Արտագաղթ

. համայնքի գլխավոր, միջհամայնքային, և դաշտամիջյան ճանապարհների անանցանելի վիճակը,

5) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են՝

.ձնհալից և անձրևներից առվակի վարարման վտանգը,

.սեյսմիկ գոտում գտնվելը,

.համայնքաբնակները պատրաստ չեն համապատասխան քայլերի դիմել վերահաս և փաստացի վտանգի դեպքում:

6) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.հողաբաժնների մասնատվածությունը,

.որակյալ սերմի բացակայությունը,

.տոհմային անասուններ չունենալը:

7) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝

.հեղեղատարների բացակայությունը,

.աղբահեռացում չկազմակերպելը,

8) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝

.գործարար միջավայրի բացակայությունը,

.ձեռնարկությունների բացակայությունը,

.երիտասարդների միգրացիան,

9) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,

.պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը,

10) Համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով բարեգործության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքի երիտասարդների կամավորության պակասը,

.հանրային համախմբվածության և մասնակցության թույլ լինելը,

.տեղեկատվական տեխնոլոգիաներին չտիրապետելը:

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Ունենալ զարգացած և հզոր համայնք, որտեղ առկա են ձեռնարկություններ, և մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով:

- Համայնքի ուժեղ կողմերի և միկրո-հնարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները, և խոչընդոտները հաղթահարելով՝ ապահովել կայուն, շարունակական զարգացում ու հզորացում:
- Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բարեկարգ:
- Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.
- Համայնքի տնամերձ հողամասերում զարգացնել այգեգործությունը և ջերմոցային տնտեսությունը
- Զարգացնել անասնաբուծությունը
- Համայնքում հիմնել կաթի վերամշակման արտադրամաս
- Նախապատրաստել բնակչությանը էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական սնունդ արտադրելուն
- Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:
- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել 50%,
- Համայնքի սեփական տարեկան եկամուտները հասցնել 30%-ով աճի,
- Համայնքում գրանցված բնակիչների թվի աճը նախորդ տարվա համեմատ հասցնել 10%-ով աճի:

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1) Գործարար միջավայրը բարելավել և ձեռնարկատիրությունը խթանել:
2) Համայնքի գույքը կառավարել:
3) նախադպրոցական կրթությունը դաստիարակությունը կազմակերպել:
4) Ակտիվ մշակութային և մարզական կյանքն ակտիվացնել՝ երիտասարդության ներգրավմամբ:
5) Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:
6) Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը:
7) Համայնքում բնակարանային շինարարությունը խթանել:

8) Ապահովել համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը: Կազմակերպել համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը: Կոմունալ տնտեսության աշխատանքներն ապահովել,
9) Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:
10) Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:
11) Գյուղատնտեսության զարգացումը խթանել:
12) Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:
13) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումն ապահովել:
14) Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը խթանել:
15) Ապահովել համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը:
16) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությունը խթանել:
17) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստել:
18) Բարեգործությունը խթանել՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

ԾՐԱԳԻՐ 1

Սարամեջ համայնքում գյուղատնտեսության զարգացումը խթանելու նպատակով կիրականացվի **«Ջերմոցային տնտեսությունների և այգեգործության զարգացում»** ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքաբնակների եկամուտների աճի ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1.Տնամերձ հողամասերում ջերմոցներ և այգիներ

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Ձեռք բերել 100 քմ չափերով 200 հատ ջերմոցներ:

1.2. Տնամերձերում տեղադրել ջերմոցները:

1.3.Իրականացնել կաթիլային ոռոգման համակարգով:

1.4. Տնկիների ձեռք բերում

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի տնտեսությունների կողմից ներդնել տնամերձ հողամասի տարածքը, ամեն տնտեսություն կողմից ներդնել անհրաժեշտ գումարի 20%-ը, իսկ համայնքը ապահովում է ոռոգման ջրի խնդիրը և դասընթացների կազմակերպումը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Սարամեջ համայնքի բոլոր բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Կազմել պլանային նախագիծը և բյուջեն: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքի տնտեսությունների ներդրումներ: Համայնքում ներկայումս չկա ջերմոցային տնտեսություններ: Ծրագրի իրականացումը կապահովի համայնքաբնակներին ընձեռնելով հնարավորություն ավելացնել գյուղմթերքների ծավալները և հետևաբար նաև ստանալ եկամուտներ: Այս ծրագրի իրականացվելու դեպքում նաև կլուծվի արտագաղթի խնդիրը: Կբարելավի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Ծրագրի բյուջեն կազմում է՝

Ընթացիկ ծախսեր՝ 20 մլն դրամ

Կապիտալ ծախսեր՝ 200 մլն դրամ

Ընդհանուր բյուջեն՝ 220 մլն դրամ

ԾՐԱԳԻՐ 2

Սարամեջ համայնքում անվտանգ երթևեկություն կազմակերպելու համար կիրականացվի **«Համայնքի գլխավոր ճանապարհի ասֆալտապատում»** ծրագիրը : Ծրագրի նպատակը հանրապետական նշանակության ճանապարհից մինչև համայնք հասնող ճանապարհի ասֆալտապատումն է, որը շատ կարևոր է համայնքի համայնքի բնակչության համար : Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1.Համայնք ասֆալտապատ ճանապարհ

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1 Կատարել ասֆալտապատում 4 կմ երկարությամբ
1.2 Կառուցել ճանապարհեզրերին ջրահեռացում

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել անհրաժեշտ գումարի 5%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Սարամեջ համայնքի բոլոր բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բնակիչները կապահովեն անխափան երթևեկությունով : Ծրագրի բյուջեն կազմում է՝

Ընթացիկ ծախսեր՝ 12 մլն դրամ

Կապիտալ ծախսեր՝ 168 մլն դրամ

Ընդհանուր բյուջեն՝ 180 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 3

Սարամեջ համայնքում մաքուր շրջակա միջավայր ու նենալու նպատակով կիրականացվի **«Աղբահանության կազմակերպում»** ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքի բնակիչներին ապահովելբարեկարգմիջավայրով: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1. Համայնքում աղբահանություն

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1.Ձեռք բերել 15 հատ աղբամաններ:

1.2. Կնքել պայմանագիր աղբահանությունը կատարող կազմակերպության հետ:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել անհրաժեշտ գումարը: Ծրագրի հիմնական շահառուներն են Սարամեջ համայնքի բոլոր բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն: Կատարել համայնքի բյուջեից փոխանցում համապատասխան գումարի չափով : Գտնել համապատասխան ծառայություն կատարող կազմակերպություն կնքել

պայմանագիր: Ծրագրի իրականացումից հետո համայնքը կունենա մաքուր միջավայր:

Ծրագրի բյուջեն կազմում է՝

Ընթացիկ ծախսեր՝ 100 հազար դրամ

Կապիտալ ծախսեր՝ 900 հազար դրամ

Ընդհանուր բյուջեն՝ 1 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 4

Սարամեջ համայնքում ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի զարգացման նպատակով կիրականացվի **«Դպրոցը մարզադահլիճով ապահովելու»** ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ երեխաների և բնակիչների մարզական կյանքի ակտիվացման ապահովումը:
Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1.Դպրոցի Մարզադահլիճ

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Կառուցել դպրոցին կից մարզադահլիճ:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից անհրաժեշտ գումարի 5%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Սարամեջ համայնքի դպրոցականները և բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2019թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Ծրագրի իրականացումից հետո համայնքի դպրոցականները և երիտասարդները կմասնակցեն մարզային, հանրապետական և միջազգային սպորտային մրցումներին և կզբաղվեն առողջ ապրելակերպով: Ծրագրի բյուջեն կազմում է՝

Ընթացիկ ծախսեր՝ 3 մլն դրամ

Կապիտալ ծախսեր՝ 29 մլն դրամ

Ընդհանուր բյուջեն՝ 32 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 5

Սարամեջ համայնքում պետական կրոնի դերը բարձրացնելու նպատակով կիրականացվի **«Եկեղեցու կառուցում»** ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ պետական կրոնի դերի բարձրացում ,քանի որ Հանրապետությունում տարածված է տարբեր քայքայիչ աղանդներ այն վատ է անդրադառնում, թե հասարակության նորմալ ձևավորման և թե պետականության կայացման հարցում:

Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1. Համայնքում եկեղեցի

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Կառուցել համայնքում եկեղեցի :

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, տրանսպորտ և անհրաժեշտ գումարի 5%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը:

Ծրագրի հիմնական շահառուներն են բոլոր բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.:

Ծրագրի համառոտ նկարագրություն.

Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: 1988 թվականի ավերիչ երկրաշարժի հետևանքով համայնքի եկեղեցին ամբողջովին վերածվել էր փլատակների: Ծրագրի իրականացումից հետո համայնքի ազգաբնակչությունը իր ծիսակարգերը կկատարի համայնքի եկեղեցում բնակչությունը զերծ կմնա քայքայիչ աղանդներից և հետագա սերունդը կդաստիարակվի հայ քրիստոնեային վայել:

Ընթացիկ ծախսեր՝ 5մլն դրամ

Կապիտալ ծախսեր՝ 50մլն դրամ

Ընդհանուր բյուջեն՝ 55մլն դրամ

4. ՀԶԾ ֆինանսավորում

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներից,
- Բարեգործություն/նվիրատվություններից
- Այլ աղբյուրներից,

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա միջոցներ, նրանց համար անհրաժեշտ է գումար ապահովել:

5. ՀԶԾ մոնիթորինգ

ՀԶԾ մոնիթորինգը կիրականացվի համաձայն Մոնիթորինգի անձնագրով (Հավելված 3) սահմանված ցուցանիշների և ժամանակացույցի:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 1

«Ջերմոցային տնտեսությունների և այգեգործության զարգացում»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Սարամեջ համայնքում ջերմոցայի տնտեսությունների և այգեգործության զարգացումը խթանել:</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Համայնքաբնակների եկամուտների աճի ապահովում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ Եկամտի աճ(%)</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>220մլն</td><td>20%</td><td>20%</td><td>20%</td><td>20%</td><td>20%</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Տնամերձ հողամասերում ջերմոցներ և այգիներ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ հատ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>200</td><td>40</td><td>40</td><td>40</td><td>40</td><td>40</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1. Ձեռք բերել 100 քմ չափերով 200 հատ ջերմոցներ:
1.2. Տնամերձերում տեղադրել ջերմոցները:
1.3.Իրականացնել կաթիլային ոռոգման համակարգ:
1.4. Ձեռք բերել պտղատու տնկիներ:</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 20մլն դրամ
Կապիտալ ծախսեր՝ 200մլն դրամ
Ընդհանուր բյուջեն՝ 220մլն դրամ՝</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Դրամական միջոցներ, ոռոգման ջուր, դասընթացների կազմակերպում</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">դրամական միջոցների ձեռքբերումը</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Սարամեջ համայնքի բնակիչները:</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021թ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Համայնքում ներկայումս չկա ջերմոցային տնտեսություններ, իսկ այգիները շատ քիչ են: Ծրագրի իրականացումը համայնքաբնակներին ընձեռնելով հնարավորություն ավելացնել գյուղմթերքների ծավալները և հետևաբար նաև եկամուտները: Այն կլուծի թե աշխատատեղերի և թե արտագաղթի խնդիրները:</td></tr>
</table>

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 2

« Համայնքի գլխավոր ճանապարհի ասֆալտապատում»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="6">Սարամեջ համայնքում անվտանգ երթևեկություն կազմակերպելը:</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="6">Հանրապետական նշ. Ճանապարհից մինչևհամայնք հասնող ճանապարհի ասֆալտապատում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ աճ (%)</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>180մլն</td><td>-</td><td>30%</td><td>30%</td><td>40%</td><td>-</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="6">1. Համայնքի ասֆալտապատ ճանապարհ:</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ կմ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>4</td><td>-</td><td>1կմ</td><td>1կմ</td><td>2կմ</td><td>-</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="6">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1. Կատարել ասֆալտապատում 4 կմ երկարությամբ
1.2.Կառուցել ճանապարհաեզրերին ջրահեռացում:</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="6">Ընթացիկ ծախսեր՝12մլն դրամ
Կապիտալծախսեր՝ 168մլն դրամ
Ընդհանուր բյուջեն՝ 180մլն դրամ:</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="6">Դրամական միջոցներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="6">դրամական միջոցների ձեռքբերումը</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="6">Սարամեջ համայնքի բնակիչները:</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="6">Սկիզբ՝ 2018թ.- Ավարտ՝ 2020թ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="6">Ներկայումս համայնքի ճանապարհը գտնվում է վատ վիճակում: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կապահովեն անխափան երթևեկություն:</td></tr>
</table>

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐՔ

«Աղբահանության կազմակերպում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակիչներին ապահովել բարեկարգ միջավայրով						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքի տարածքում տեղադրել աղբամաններ:						
	Ցուցանիշներ աճ(%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		1մլն	100%				
Ծրագրիմիջանկյալ արդյունքներ	1. Համայնքում աղբահանություն						
	Ցուցանիշներ հատ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		15	15				
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Ձեռք բերել 15 հատ աղբամաններ: 1.2. Կնքել պայմանագիր աղբահանություն կատարող կազմակերպության հետ:						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 100 հազ. դրամ Կապիտալ ծախսեր՝ 900 հազ. դրամ Ընդհանուր բյուջեն՝ 1 մլն. դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Դրամական միջոցներ, աղբահանություն կատարող կազմակերպություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական շահառուները	Սարամեջ համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2017թ.						
Ծրագրիհամառոտ նկարագրություն	Այժմ համայնքում աղբահանություն չի կատարվում:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 4

« Դպրոցի մարզադահլիճի ապահովում»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Խրախուսել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի զարգացումը:</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Դպրոցականների և բնակիչների մարզական կյանքի ակտիվացման ապահովում:</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ աճ(%)</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>32մլն</td><td>-</td><td>-</td><td>30%</td><td>70%</td><td>-</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Դպրոցի մարզադահլիճ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>32մլն</td><td>-</td><td>-</td><td>14մլն</td><td>18մլն</td><td>-</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1. Կառուցել դպրոցին կից մարզադահլիճ:</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 3մլն դրամ
Կապիտալ ծախսեր՝ 29մլն դրամ
Ընդհանուր բյուջեն՝ 32մլն դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">դրամական միջոցներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">դրամական միջոցների ձեռք բերումը</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Սարամեջ համայնքի դպրոցականները և բնակիչները:</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">Սկիզբ՝ 2016թ.- Ավարտ՝ 2020թ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Այժմ համայնքի դպրոցականները և երիտասարդները զուրկ է մարզվելու հնարավորությունից: Ծրագրի իրականացումից հետո համայնքի դպրոցականները և երիտասարդները կմասնակցեն մարզային, հանրապետական և միջազգային սպորտային մրցումներին և կզբաղվեն առողջ ապրելակերպով:</td></tr>
</table>

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 5

«Եկեղեցու կառուցում»

(Ծրագրիանվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքում պետական կրոնի դերի բարձրացու</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Սարամեջ համայնքում եկեղեցու կառուցում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ աճ(%)</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>55մլն</td><td>-</td><td>-</td><td>30%</td><td>30%</td><td>40%</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Համայնքում եկեղեցի</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>55մլն</td><td>-</td><td>-</td><td>10մլն</td><td>20մլն</td><td>25մլն</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1. Կառուցել համայնքու եկեղեցի:</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 5մլն դրամ
Կապիտալ ծախսեր՝50մլն դրամ
Ընդհանուր բյուջեն՝ 55մլն դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Աշխատուժ, տրանսպորտ, դրամական միջոցներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">դրամական միջոցների ձեռքբերումը</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Սարամեջ համայնքների բնակիչները:</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">Սկիզբ՝ 2019թ.- Ավարտ՝ 2021թ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Այժմ համայնքում եկեղեցի չկա, այն փլուզվել է երկրաշարժ ժամանակ: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բնակիչները զերծ կմնան քայքայիչ աղանդներից և կանցկացնեն իրենց ծիսակարգերը:</td></tr>
</table>

ՀՋՀ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄ
Սարա
(2017-20

Պարտադիր խնդիր	Բյուջետավորված միջոցներ, մլն	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ֆինանսավորման		
		2017	2018	2019	2020	2021	Համայնքի սեփական եկամուտներ,մլն	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ, մլն	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ, մլն
1. Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում	26	7,8	7,8	7,8	2,6	0	0,78	0	25,22
2. Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում	0	0	0	0	0	0	0	0	0
3. Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն	45	9	9	9	9	9	45	0	0
4. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ	0	0	0	0	0	0	0	0	0
5. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն	5	1	1	1	1	1	5	0	0
6. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը	25	7,5	7,5	10			0,75		24,25
7. Համայնքում բնակարանային շինարարության խթանումը	0	0	0	0	0	0	0	0	0

Հավելված 2

ՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ամեջ
021 թթ.)

ն աղբյուրներ			Ծախսերի դասեր		Ֆինանսավորման կարգավիճակ			
Բարեգործություն/նվիրատվություն	Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն	Այլ աղբյուրներ	Ընթացիկ ծախսեր, մլն	Կապիտալ ծախսեր, մլն	Ֆինանսավորումն առկա է	Ֆինանսավորման շուրջ ընթանում են բանակցություններ	Ներկայացվել է ֆինանսավորման հայտ	Ֆինանսավորման հարցը լուծված չէ
0	0	0	5	21				լուծված չէ
0	0	0	0	0	0	0	0	0
0	0	0	0	0	առկա է			
0	0	0	0	0	0	0	0	0
0	0	0	0	0	առկա է			
			7	18				լուծված չէ
0	0	0	0	0	0	0	0	0

8. Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը	93	1մln	18,6	18,6	18,6	18,6	2,79		90,21
9. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում	17500	3500	3500	3500	3500	3500	525		16975
10. Աջակցություն պետական պաշտպանության իրականացմանը	0	0	0	0	0	0	0	0	0
11. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում	0	0	0	0	0	0	0	0	0
12. Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը	41	12,3	12,3	12,3	4,1		1,23		39,77
14. Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող համայնքներում՝ զբոսաշրջության զարգացման խթանում	0	0	0	0	0	0	0	0	0
15. Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում	0,5	0,1	0,1	0,1	0,1	0,1	0,5	0	0

0	0	0	7	86	0	0	0	լուծված չէ
			7500	10000				լուծված չէ
0	0	0	0	0	0	0	0	0
0	0	0	0	0	0	0	0	0
			11	30				լուծված չէ
0	0	0	0	0	0	0	0	0
0	0	0	0,5		առկա է			

16.Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանում	0	0	0	0	0	0	0	0	0
17.Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծում	0	0	0	0	0	0	0	0	0
19. Բարեգործության խթանում	0	0	0	0	0	0	0	0	0

0	0	0	0	0	0	0	0	0
0	0	0	0	0	0	0	0	0
0	0	0	0	0	0	0	0	0